

№ 7537/10

Հոգեշնորհ
Տ, Վահան Վարդապետ Գէորգեան
Տեսուչ Հայոց Վանուց
ԼԱԻՈՂԻԿԷ

Ժամանակին ստացուած են Ձեր Սիրելութեան Ապրիլ 30 եւ Մայիս 9
թուակիր, Համար 158, 169 հաղորդագրութիւնները, առաջնոյն կցուած հաշուե-
ցոյցով եւ ստացագրերով:

Տնօրէն Ժողովի երէկի նիստին մէջ վերստին խորհրդակցութեան
առարկայ եղաւ Լաւոզիկէի Վանուց Տեսչութեան որոշ ամսաթոշակ մը յատկացուելու
մասին Ձեր կողմանէ քանիցս կրկնուած խնդրանքը:

Նկատելով որ, Լաւոզիկէի Տեսչութիւնը սկիզբէն ի վեր մատակարար-
ուած է տեղական հասոյթներով, առանց Ս, Աթոռէն որեւէ չափով նիւթական օժան-
դակութիւն ընձեռուելու: Նկատելով նաեւ, թէ դատական արտակարգ ծախքեր, եւ
մանաւանդ վերջին երկրաշարժէն մեծապէս վնասուած վանքապատկան շէնքերու եւ
կալուածոց անյետաձգելի նորոգութեանց յատկացուած գումարները առաւել եւս
ծանրացուցած են Ս, Աթոռոյ ելեւմտական անձկութիւնը, Տնօրէն Ժողովը կը ցաւի
յայտնել, թէ հնարաւոր պիտի չըլլայ Տեսչութեանը ամսաթոշակ մը յատկացնելու
Ձեր խնդրանքին առջեւ բացառիկ կարգադրութիւն մը ընել:

Արդ, փափաքելի է որ Ձեր Սիրելութիւնը, շնաւորի ըլլալ, իր նա-
խորդներուն նման տեղական արդիւնքներով հաւասարակշռել Տեսչութեանը պիտե՛ն:
Իսկ հակառակ պարագային, այս մասին Ձեր նպատակն ու տրամադրութիւնները փու-
թացէք որոշապէս տեղեկագրել Տնօրէն Ժողովին:

Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար
ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՓՈՒԱՆՈՐԴ

Արտ. Գրիգոր Գրիգորեան